



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



21282

891.99.09

5-79

96562-64

10228-38

(33)

2308

“ Ե՞՞՞-ըստան “ սուսում վեհապահութեան վրա Յանիքու

2003

Ամէնժամանակ իմաստակը զրիչը ձեռք առնելուս, երբոր  
ըստ իւր քմաց նշամարեալ՝ այլոց սխալը ուղղելու հանդէս  
կ'ելանէ, նորանոր սխալանաց մէջ ինքը կ'անկանի. որով և  
փոխանակ իր ճանաչած սխալը հրատարակելու, իր իմաս-  
տակութիւնը աշխարհքի յայտնի կառնէ: Ուստի իմաս-  
տակի ճիշդ զործքը քննելով, այսպէս կզոնենք նորա նկա-  
րագիրը. „Խմաստակ կըսուի այն մարդը՝ որ իրեն արհեստ  
կանէ մէջէ մէջ ճանբաներ ընտրել և անըմբոնելի փաս-  
տեր զործածել՝ խարելու նպատակով. զինքը կքարոզէ իր-  
ը կենդանի իմաստութիւն. իր միտքը զիտութեան հանք  
կ'համարի. կպարծի, կուռի... և հրապարակ կիջնէ,  
ուսմիկներուն բան ծախելու“ (Եղեածուածու. թիւ 6):

Այս իմաստակութելը բանադաշտութեան անուն տալով,  
Արենեանցը կը կոչէ Ճշմարտութիւն. „Եռ զրիչը ձեռ-  
քը, խօսէ Ճշմարտութիւն թագաւորների յառաջը և մի  
ամաչեր“։ ուստի և զրիչը ձեռքն առած, մեր Վնուշաւա-

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳՈՐԾՎԱԿԱՆ ԵՎ ԽՍՀԿ ուժամբ  
ՀԱՅՀ-ՀՀՀ  
1958

A circular library stamp with a double-line border. The text " NATIONAL LIBRARY THAILAND" is arranged in a circle around the center. In the center, the year "1939" is printed above the word "MAY".

Այս քանի մի խօսքն է որ տպուած է Աւանի ամսադրի ժամանակակից 1862 ամի. զոր թէև իմաստունը իբրև բանագատութիւն խոստացել է զրել, բայց իր խոստմունքը ժխտելով, բանագատութեան սահմանէն դուրս է եկել, 'ի հարկ է կամ առ տղիտութեան կանոնաց, կամ առ նախանձու. որով կ'երեւի թէ Վարենեանցի՝ Անուշաւանայ վրա բանագատութիւն զրելու միտքը այն է եղել, որ հոգեւորականների միսը ծամէ. վասն որոյ „նախանձու ատելութեան... և այլ դառն կրից“ ստիպեալ, յարձակուել է մեր անուամբ՝ բոլոր հոգեւորականաց վրա: Անզ շտոդիւրին էր մեր հերքմանը մէջ՝ նորա անձնական արժանաւորութիւնները մի առմի նշանակել, որ հասարակութիւնը իմանայ բանածախի ով եղածը. բայց մեր բանագատը ինքնին կ'ձանաչէ որ իր չափ խօսելու լեզու մենք էլ ունինք. ուրեմն իբրև մարդ՝ և մարդկային աստելութեան կիրք էլ: Ասկայն եթէ նրան այդ մարդկային կիրքը կ'յարձակէ մեր վրա, մենք այդ կիրքը սանձահարելու չափ՝ քրիստոնէաբար առաքինանանք պիտի. եթէ այդ կրիւք մեր բանագատը մեր վրա կ'յարձակի յատելութիւն, մեր կոչումը զմեզ կառաջնորդէ զէպ 'ի նա սիրով, դառն կրից սանձահարող սրբազն առաքինութեամբ:

Թէև ցաւ է մինչև յոյժ որ Ոտուսիայի մէջ ևս վերջապէս մեր հոգեւորականութիւնը այնքան ստոր ընկած կերեւի և անտէր մնացած, որ մէկ համառօտ տետրակի պարուակաւ՝ այսպէս հրապարակաւ կ'պարսաւի: Բայց գոհութիւն Այս որ Վարենեանցի նման մարդը այսօր հոգեւորականութեամբ զրիչ կ'շարժէ, հոգեւորականի հացով կերակրուածը, հոգեւորականի հանդերձով իր մերկութիւնը ծածկողը. բայց թէ որ մեր հոգին կվկայէ, անշուշտ իմաս-

տունին դրդող է եղել, որ իր մերկութիւնը ծածկող հոգևորականութեան դէմ զրիչ ձեռք կառնու:

Մենք իրաւունք ունեինք պատասխան չտալու, նախ՝ որ մեր վիպասանութիւնը օրագրաց էջերում չի կարդացել բանագատը. երկրորդ՝ որ իր բանագատութիւնը բոլորովին առանց պատմական տեղեկութեան է արել: Բայց և այնպէս երկու առթիւ պատասխան կտանք. մէկ՝ որ իմաստունը մեր պատճառաւ ազգիս ընդհանուր հոգևորականութիւնը բամբասելու և զրպմրտելու իրաւունք չունենալը ճանաչէ. և միւս՝ որ իր հարցմանց պատասխանը կերպիւ մի ուզել է սովորի. — Անք էլ կտանք:

Բայց նախընթացաբար կիսնդրենք իրանից որ մենք մի և նոյն յօդուածի մէջ քանի մի կերպարանք ու դէմք առնելու շնորհքը չունինք. հետեւաբար երկդիմի ու երկլեզու չենք. իր յօդուածը սկզբէն մինչև վերջը քանի մի դէմք ու կերպարանք առնելով, վախճանին կհասնի. — Ի՞նչ վախճան, գուցէ իր ասածին պէս, շամպանեան զինւոյ զօրեղութիւնը խելապատակին շատ ներգործելով, Անուշաւանայ մնացեալ թերութիւնքն էլ նոր քերականութիւն սորվողներին կ'թողու որ ՚ի յայտ բերեն:

Վսացինք որ մեր իմաստունը բանագատութեան սահմանէն դուրս գալով, մեր վիպասանութիւնը դատելու տեղ, զմեզ ևս այն սուրբ հարց կարգումն է դատել, որոց մերկութիւնը ծածկելու՝ Կարենեանցի մօտ ոչ հանդերձ է մնացել, ոչ կարողութիւն և ոչ համբերութիւն. ուստի մեզ ևս հարկ էր նովին պատուով զինքը ընդունել, որպէս զի իմանայ աշխարհ, թէ արդեօք Կարենեանցի մօտ չմնաց հանդերձ և կարողութիւն հոգևորականաց մերկութիւնը ծածկելու, եթէ հոգևորականաց մօտ չմնաց՝ ոչ



հանդերձ, ոչ կարողութիւն և ոչ համբերութիւն Ապրենեանցի մերկութիւնը ծածկելու: Բայց, ինչպէս որ ասացինք, ատելու տեղ՝ սիրելու չափ կարողութիւն ունինք:

Ապրենեանցը երբ որ ինք զինքը մեր սուրբ Եկեղեցւոյ հարազատ որդի կճանաչէ, և այն հայերի կարգը կանցնի այսօր, որ ուրիշ ազգերի ոչ Եկեղեցւոյ և ոչ Եկեղեցականաց վրա աչք չունելով, մերը պահել է և պիտի պահէ. Ի՞նչ վատ գործ համարեց նա ուրեմն մեր վիպասանութիւնը. և միթէ ինքը վատ գործոց մերկութիւն չունի: Որ չի պահեց զայն, այլ բռնադատուեց մեր Անուշաւանը մինչեւ բանադէսների ատեանը տանել. երբոր ամբողջ տետրակը Խորենացւոյ մատենէն Արայի և Շամիրամայ գործոց պատմութիւնը պատմական կարգաւ իւր ա. թ. և դ. հառածոց մէջը առնելով, մնացածը հիւսուած է այս Առասպելի վրա, զոր Խորենացին յերգոց վիպասանաց է առել. „Աստ ուրեմն զմահն ասել Շամիրամայ և զհետեւակ փախուստն“ և այլն: „Եւ հիւսուածն էլ իբրև Ասորեստանի Շամիրամայ ժամանակին և նորա գործոց անցք՝ Անուշաւանայ կիսօսի Օրադաշտ. միթէ Ապրենեանցի ձեռքի՞ն էր զ Օրադաշտ մովն հայագէտ և պատմաբան առնելու. և միթէ բանաստեղծի երեւակայութիւնն էլ սահմանափակ պիտի լինէր բանադատի ինելահասութեան կոպարին տակ. — Անուշաւանը նախընթացաբար յայտնել է, որ իւր դ. հատուածէն մինչեւ վերջը „պատմութեան կարգէն պիտի տարբերի բանաստեղծից ոճով“ (Յառաջաբան. Ել. 12):

Աերեւի ուրեմն, թէ Ապրենեանցի զրականութեան հոգւոյ սէրը գեռ ևս չի զարթնել, որ իմանայ թէ այն Առասպելին մէջ պատմաբանական միտք կայ ամփոփուած, թէ ոչ: Խորենացւոյ ժամանակին պատմութիւնները այն-

քան յայտնի էին, որ առասպելներով հասկացուելու բաւական կլինէր. վասն որոյ և ինքը փոխանակ պատմութիր կրկնելու՝ առասպելը միայն յիշելու բաւական է համարել։ Խոկ որովհետեւ մեր ժամանակին հայկազանց գործքերը առաւելտպէս անլուր են՝ որոց վրա առասպելները հիւսուած են, (ան Ան-շատան. Եջ. 6 — 10). վասն որոյ և առասպելները մեզ անզիտելի են այսօր. հետեւաբար և ամէն ուրիշ ընթերցողի՝ մեհենական պատմութեանց կորուստը զգալի։ Ուրեմն պատճառ չկար այսպիսի հին աշխարհքի վիպասանութիւն մի դատելու, և այս պատրուակաւ բոլոր հոգեորականները խածատելու. մանաւանդ թէ իր վսեմախօս զրուածների վրա զմեզ օր մի բոպէ մի խօսած ու լսած չունի, այլև մեր շուքն անզամ իւր արեր խաւարացրած չունի։

Ի՞նչ Ապրենեանցը ինքնին ստոյդ պատճառը ցոյց կտայ. որ իւր քանի մի խօսքը՝ զոր ինքը բարձեմէտ իքետիւայ կը կոչէ, „նախանձու, ատելութեան... և այլ դառն կրից նիւթ“ եղած է իւր սրտի մէջ. վասն զի „սրանից տասը տարի յառաջ (կորէ նա) երբոր շատ քիչ կամ զրեթէ մի ընկեր անզամ չունելով“ (ինքը անզոյդ էր Տփիսիսի մէջ. աւաղ քաղաքին, “Եերսիսեան դպրոցը նորա բանադիտութեամբը միայն ծաղկեց ու պտուղ տուաւ) ինքը համարձակեցաւ այն հանդիսարանը մտնելու. որ. ուամիկներուն բան ծախելու, Մսեր Մազիստրոսի Քրիստոնէական վարդապետութեան վրա կրիտիկայ զլելու (Եջ. Առա. 817 'է ծան.). „զոր նա իմանալով մի վասակահոգի մարդուց (մեր բանադատը վիլիսովիայի հողեփոխութեան աղանդն էլ կընդունի) մեծամեծ բողոքներ հանեց... որով այն կրիտիկայն մինչև ցայսօր առանց տպուելու մնաց“։

Եթէ արդարեւ Անգիստրոսը բողոքով դադարեցնել է տուել մեր իմաստունի կրիտիկան (որ մեզ անհաւատալի թուի), շատ սխալուել է. թող տալու էր տպուելու, որ աշխարհք տեսնէր թէ այս դիտուն մարդը ի՞նչ և ի՞նչ թերութիւն դած կ'լինէր Աստուածաբանի զրքին մէջ, որի վրա պատմութեանց չափով էլ գուցէ դիտութիւն չէր ունենալ, և ապա զարժանին պատասխան կուղղէր. վասն զի „Այսպէս են կամք Աստուծոյ. բարեգործացն պապանձեցուցանել զանդգամ մարդոց զանդիտութիւն“ (Ա. Պէտր. Է. 15):

Հարկաւ բանադատը քանի որ իր լեզուին դառնութիւնը կաւելցնէր, այնքան էլ իր արդէն չունեցած վարկը կը կորցնէր. ուրեմն և Անգիստրոսը հասարակոց երեսէ ընկած մի զրչեց վախնալու առիթ չունէր: Եթէ Արենեանցը կարողանում էր զրիչ շարժել՝ կրիտիկայ կարկատելու, կարող էր և Անգիստրոսը հզօր զրչաւը՝ նորա չարամիտ կրիտիկայի դէմ իր ուղղութիւնը զրաւոր ջատագովել: Խսկ եթէ չէ արած նա այն ժամանակ այդ բանը, զրա պատճառը իրեն կթողունք հրատարակել 'ի զիտութիւն ճշմարտասիրաց:

Ահա մեր վրա յարձակուելու էլ Արենեանցի „նախանձու, ատելութեան և այլ դառն կրից նիւթը“: Յառաջ (ինչպէս ինքն է յայտնում) կապուած է եղած խեղճի լեզուն, բայց յետոյ դարձեալ բացուել է. ուստի չկարողանալով ճշմարտութեան ձայնը սրտին մէջ հեղձամղձուկ առնել, ստիպուում է խղճիցը արդարութեան ատեանը հանել իր կարծիքը: Եթէ իմանայինք, մեր բանադատին կարեկցելով, շատ յառաջ կզրէինք Անուշաւանը:

Արենեանցի „քանի մի խօսքը“ իւր վայրախօս մասնե-

բէն քարմաղելով, երեք խօսք կդտնենք պատասխան տալու. որոց վըա „քանի մի խօսքին“ տէրը յոյսը դրած է թէ անպատասխանի կմնան մեր կողմէն, ինքն էլ իմաստնաղոյն կերեի յանձն իւր:

## Ա

Ապրենեանցի առաջին խօսքը. „Մեր հոգեորականները Աստ „ուածաշունչ դրոց խօսքերը աղջատելով, ժողովրդոց աչքերը „կապել են. նոքա իրանց վատ գործքերը յանդիմանողներին՝ ան „հաւատ, հերետիկոս և հերձուածող բառերով են դրոշմել: «Նո „քա ասումեն թէ մենք ձեր հայրն ենք, եթէ մեզի հարբած ու „մերկ տեսնէք, Նոյի, Աեմ և Յաբէթ որդւոց պէս պիտի ծածկէք»: (Յետոյ կ'դառնայ առ հոգեորականս) „մենք ով սուրբ հարք, ալաւ իմացէք, որ մեր սուրբ եկեղեցւոյ հարազատ որդիքն ենք. „մենք ուրիշ ազգերի ոչ եկեղեցւոյ և ոչ եկեղեցականաց վրա „աչք ունինք, մենք մերը պահել ենք և պիտի պահենք. ձեր „մերկութիւնը ծածկելու համար մեզ մօտ ոչ հանդեր: մնաց ոչ „կարողութիւն և ոչ համբերութիւն» (Եր. Կռն. 817):

Հայոց բոլոր հոգեորականութիւնը այսպիսի ծանր բամբասանաց և զրապարտութեան տակ դնելին ետքը, ընթերցողաց աչքն էլ նախընթացաբար կապել կուզէ Հայոց Եկեղեցւոյ այս հարազատ որդին՝ ասելով. „Այս խօսքերս զրելով, չկարծէ մինը թէ ընդհանրապէս բոլոր հոգեորականաց վրա եմ յարձակուում»:

Դնենք թէ բոլոր հոգեորականաց վրա կ'յարձակուի մեր իմաստունը, դարձեալ երկիւղ չի ունենայ. մեր ազգի հոգեոր իշխանութեան մէջ՝ ի սկզբանէ մինչեւ ցայսօր կրակի փայտակոյտներ պատրաստուած չեն եղել. ուստի և ոչ անիծից ու բանաղբանաց շանթեր կ'թափին իր նման բանադատի դլիսին. (ինքը եթէ իւր դորձքով կ'սպասէ ընդունել,

այն Աստուծոյ արդարադատ հասուցումն է) մեր հոգեւորական քարոզութիւնները եթէ ժիզուիթութիւն չէ եղել և չէ, որպէս և իր բանադատութիւնը բողոքականութիւն, ուրեմն կրակի փայտակոյտները, անիծից ու բանադրանաց շանթերը մեր ազգի և հոգեւորականաց առաջին աննշան բառեր են: Ելան արդարեւ երբեմն մեր ազգի մէջէն անհաւագք, հերետիկոսք և հերձուածողք՝ ի հաւատս, բայց մեր Եկեղեցին դարձեալ նոցա հաւատաքննութեան խարոյէներ չի պատրաստեց: Ո՞վ է ուրեմն Կարենեանցը, որի անհմաստ մէկ շաղփաղի բանադատութեան դէմ (ի՞նչ բանադատութիւն, պատմական անգիտութիւն սուտով սխալով լցուած), հոգեւոր իշխանութիւնը իւր նախնական բարեպաշտութեանը դէմ՝ Արեմանեան Եկեղեցւոյ միջնադարեան երկաթի դաւազանը ձեռք առնու, զոր բնաւ չի ունեցել. ուր թէ մեր վիպասանութիւնը դատելու մասին, մենք այնքան անյիշաչար ենք, որ թոյլ չենք տալ մեր բանադատի գլխին անիծից ու բանադրանաց շանթեր թափելու: — Եւ ո՞վ են թափողները. ամօթ է այն հոգեւորականին որ այս լուսաւորեալ դարուս մէջ մէկի զրաբանութեանց դէմ խօսելու իրաւոնք ունեցած ժամանակին՝ լոէ, ու անիծից և բանադրանաց շանթերի ապաւինի, զիտելով որ անէծքը, բանադրանքը, հաւատոյ ուրացողաց դէմ միայն են հրամայուած: — Եթէ Կարենեանցի անհմուտ բանադատութիւնը մեր համառօտ տետրակի դէմ՝ հերետիկոսութիւն չէ, յիրաւի որ շամպանեան ըմսելեօք զմայլեալ կլինէր, որ իւր մի քանի խօսքի դէմ՝ կրակի փայտակուտերի և անիծից ու բանադրանաց շանթերի կ'սպասէ, կամ անհաւատ, հերիտիկոս և հերձուածող կոչուելու:

Տեսնենք ուրիմն մեր հոգեւորականաց վաս գործքերը

ի՞նչ է եղել, և Ապրենեանցի նոցա մերկութիւնը ծածկելը  
ի՞նչ. — 'ի հարկ է իմաստունը մեր ազգի իւրաքանչիւր  
հոգեւորականի հետ նոցա կենաց ասպարեզը չափելու՝ նո-  
ցա կենակից ու գործակից չեն եղել։ Այս մէկ լոկ զրպար-  
տութիւն է. ուրեմն և ոչ մի հոգեւորականի մերկութիւն  
չծածկելէն ետքը՝ կարծեմ թէ բոլոր Վրաստանը կ'վկայէ  
որ, Ապրենեանցի վրա եղած այժմեան հանդերձն անգամ  
հոգեւորականի արած է, և ոչ թէ ինքը հոգեւորականի մեր-  
կութիւն ծածկած ունի. և թէ քանի քանի հոգեւորական-  
ներ նա մերկացրել է, որոց որդիքը մինչև ցայժմ դեռ ևս  
այն մերկութիւնը կը կրեն, եթէ կամենայ՝ միառմի կ'ապա-  
ցուցանենք։ Ուրեմն այս իր զրպարտութիւնը բոլոր հոգե-  
ւորականութեան առաջին արժէք չունի։ Մենք դիտենք  
որ Ապրենեանցի անձին և վատ գործոց մերկութիւնը հո-  
գեւորականները ծածկելով, նոցա մօտ չմնաց ոչ կարողու-  
թիւն, և ոչ համբերութիւն. — իսկ եթէ իր պաշտօնի մէջ,  
զոր երբեմն ունէր, նոցա արած ծառայութեան համար  
կ'զրէ, այն տեղ հոգեւորականը յանցանք չունէր. վասն զի  
Ապրենեանցը իր պաշտօնի շահասիրութենէն ստիպեալ,  
ոչ միայն հոգեւորականի մերկութիւնը կծածկէր, այլև աշ-  
խարհականի, այլև օտարազգւոյ։

Մեհենական պատմութեանց կորստեան վրա մեր ցա-  
ւելը՝ Անուշաւանայ բանազատը որ զրպարտութիւն կհա-  
մարի մեր սուրբ Լուսաւորչու վրա, և Եսայեայ բողոքը  
նորա բերանը կ'զնէ, ոլուր երկին « և այն, ո՞ զիտէ թէ  
արժանայիշատակ Ապրապետ եպիսկոպոսը քանի անգամ  
կրկնեց զայն իր հաւատարիմ ծառայի (Ապրենեանցի)  
դէմ ու ապա իր հանդիստն առաւ. որ այնպիսի հոգեւո-  
րականի հացը կերաւ, հոգեւորականի հանդերձով իր մեր-

կութիւնը ծածկեց, և այնպիսի հոգեռականէն երես դարձրուց, և այսօր անխնայ հոգեռականի միսը կ'ձամե:

”Եռքա (մեր հոգեռականները) Աստուածաշունչ զբոց խօսքերը աղջատելով, ժողովրդոց աչքերը կապել են“ ՚ի հարկ է տղիտութեամբ:

Թռէ ո՞ք են մեր սուրբ հայրերից շատերը՝ որ Աստուածաշունչ զբոց խօսքերը աղջատելով ժողովրդոց աչքերը կապել են, հարկաւ զրպարտիչը իր զրպարտութեանը պատասխան կ'տայ: Մենք ազատ լինելով այդ զրպարտութենէն, ըստ որում առասպել, հեքեաթ, մասալ կ'պատմենք, (մարդու մտաց աչքը նախանձու կուրացած ժամանակին, մարմնոյ աչօք էլ ոչ ինչ բան չի տեսնիլ<sup>1</sup>), մեր կողմանէ մեր բանադատի սխալները ցոյց տալու աշխատինք:

## Բ

Երկրորդ խօսքը — ”Նոքա (նախնի սուրբ հայրապետք) իրանց ՚հօտին հոգեկան կերակուր էին տալի. Նոքա ժողովրդեան կառիքն իմանալով, կուրծքերը դէմդրած հեթանոսական և հերձուածողական մոլորութեանց հետ էին պատերազմում. իսկ ՚այժման հետացեալ մոլորութիւնքը յառաջ բերելու են աշխատում: Հայոց ազգի որդիքը հոգեռը կերակուրի պակասութիւնից ՚օտար աղքաց փարախն են դիմում: Նոքա մեզ համար առասպել, ՚հեքեաթ, մասալ պատմելով քուն են դնում“ (Եթ. Առա. 815):

Ուստի իմաստունը Շնորհալոյ ընդհանրականէն օրինակ բերելով (թէև անյարմար այս խնդրոյս) բոլորովին յոյսը կդնէ յետ այսորիկ որ մենք, նաև միւս սուրբ հարք, հետեւինք Շնորհալի սուրբ Հայրապետին:

<sup>1)</sup> Տես Մելու Հայաստանի 11. թիւը 1858 տիր:

Այս խօսքով Արենեանցը բոլոր հոգևորականներին կ'արդելու ազգային պատմութեան, ազգային յառաջադիմութեան, ազգի մանկանց զարդացման զրուածքներ զրելու և միանդամայն ազգի և հայրենեաց զրաւորապէս ծառայելու, որոնք „մեր սուրբ կոչմանը անվայելուչ բաներ են“։ Արենեանցի այս գատաստանով Վենետիկու և Վենեայի ազգային տպարանները բոլորովին ծովը թափելու են. ինչո՞ւ—վասն զի իրենց սուրբ կոչմանը անվայելուչ՝ Եղովառու, Ռոպենսոն, Աղուեսազիրք, Ռոկեֆորիկներ կտպեն, և այլն, և այլն։

Մենք չտարակուսինք ուսումնական վարդապետի հետ թէ՝ „ով է սահման կտրեր և մատենազրութիւնը աշխարհականի և Եկեղեցականի մէջ բաժին բաժին ըրեր“ (զուցէ Արենեանցը 'ի Տփխիս<sup>1)</sup>). այլ յառաջ երթանք ու տեսնենք, հոգևորականնը արդեօք, եթէ Արենեանցը հայրենեաց ծառայելու 'ի զրաւորս, առաւել անձնանուեր զոհեղաւ։

Դայց նախ՝ ♦այոց ազգի որդւոցը մենք հոգևոր հաց պատրաստելու ժամանակին, տեսնենք թէ մեր աշխարհական բանադատն էլ ♦այոց ազգի մանկանց մտաւոր անդը սերմաննելու՝ ի՞նչ և ո՞րպիսի սերմն յերկիր ձգեց ցայսօր ժամանակի. արդեօք ուսման կամ գաստիարակութեան. արդեօք զիտութեան և հանճարոյ. կամ մաթեմաթիկան արդեօք. և այսպէս այս խնդիրը լուծենք թէ „♦այոց ազգի որդիքը հոգևոր կերակուրի պակասութիւնից արդեօք օտար ազգաց փարախն են դիմում, եթէ առաւելապէս ազգային ուսումնական մատեանների երաշտութիւնից. ո՞ր

<sup>1)</sup> Մասեաց Աղաւնի. թիւ ժկ. 1862 ամի.

Հայր հաւատոյ զրուածքի պակասութիւնից օտար ազգաց դիմեց։ Եթէ եղել են այնպիսիք զոր մենք չգիտենք, օտար ազգաց այս ամէն զրոց և ուսմանց յաճախութիւնը՝ և մեր այնց ամենայնի պակասութիւնը եղել է պատճառ։ Այս պակասութիւնն էլ կը լցուցանէ Կարենեանցը, որ ահաւասիկ։

Այսուհետեւ երեք միլիոն հայ ազգի որդիք ազգային լեզուով ուսումնական զրոց երաշտութենէն ծարաւ չի պիտի մեռնեն, որովհետեւ Տփխիսու Կարնեցւոց պատուելին նոցա համար տասը տարուան մէջ (տասը տարի յառաջ թիֆլիզի մէջ զրեթէ և ոչ մէկ զրագէտ կամ բանագէտ կար բաց 'ի Կարենեանցէն) երեք՝ ուսումնական, պատմաբանական, մաթէմատիքական և այլեայլական զրքեր է թողել՝ չայոց ազգի գիտութեան ծարաւը զովացնելու համար։ Մէկ Կառավարեցէն՝ վրացահայ լեզուով Երից վարդապետաց դարձի վրա մէկ ալանի Նոնալն իր անձին զովութեան։ և մի՛ հրաշափառ Շահնշանի, թէ որ չունենար իւր հրաշափառազոյն կրիտիկան։ Այս Աքելն չ'ասենք, այն Արթասթազիոսին պարծանք։ և մի՛ անսահման Շահնշապարհութեան վերջերս (այն էլ մի՛ ասիլ, որովհետեւ սահմանից դուրս է)։ որովք մեր իմաստուն հեղինակը այսօր չայոց զրականութեան աշխարհքի նախագահութեան աթոռն է նստել։ և „զրականութեան հանդիսին մէջ՝ ծառայի, իշխանի, մազիստրոսի, վարդապետի, եպիսկոպոսի և Կաթողիկոսի հետ հաւասար կարգ է բռնել“ (Եղ. Առա. 817)։ և երեք միլիոն հայ ազգի ընդհանուր լուսաւորութեան զեկը ձեռք առել—իր զրիչը, ընդհանուր հայ հողեւորականութեան կապառնայ որ ազգի և հայրենեաց համար զրաւոր աշխատութիւն թողալու զրիչ ձեռք չառնուն։

Խակ թէ որ ներկայ ժամանակիս հայ որդւոց ղիմումն կ'ակնարկէ, ինչպէս որ իր միտքը կշօշափենք, շռայլ կեղծաւութիւն կանէ արդարեւ ինքը և այոց հոգեորականութեան դատաւորը. որ անցիցը ականատես լինելով, յանցանքը մէկի տեղ՝ ընդհանուր հոգեորականութեան երեսին կտայ. երբ իր իրաւունքը (եթէ ունէր) ամփոփելու էր անշուշտ մի միայն այն սուրբ հօր վրա, որ օտար ազգաց փարախը ղիմող հայ ազգի որդւոց մէջը նստած՝ իր ապրուսոը մարմնաւորապէս կանէ, նոցա հոգեոր կերակուր պատրաստելն էլ իր պարտքն է. վասն զի գուցէ զիտէ ինքն էլ որ Երկոտասան առաքեալք նաև Եօթանասունքն յաշխարհ ամենայն զնացին, և ոչ ամենքը՝ ի մի աշխարհ։

Եղէ մեր զրականութեան դարուց պատմութիւնը համաձայնեցնենք այս իրաւացի պահանջմանը հետ։ — Եթէ մեր իմաստունը կ'պահանջէ որ „իոհական հեղինակը հին դարուց պատմութիւն զրելու ժամանակ պէտք է ինքը մըտօք երթայ այն դարը. ընտելանայ այն ժամանակուայ մարդկանց բարուցը... և այլ հանդամանքներին“ (Եջ. Արև. 823): Եւաղ որ այս հատուածն էլ մեր իմաստունի բանագողութիւնը ցոյց կտայ։ Ինչո՞ւ իր իրաւը ինքը չի պահել. ինչո՞ւ իր ասածը նախ ինքը չի առնել, — վասն զի աշխարհական է. մեր աշխարհականը ազատ է հոգեորականի հանդերձով իր մերկութիւնը ծածկել, ու հոգեորականաց մերկութիւնը ծածկող ձեւանալ. մեր աշխարհականը ազատ է այլոց զրութիւնը իբրև իւրն ցուցանել և բանագողութիւն չհամարել. մեր աշխարհականը ազատ է ասել և ժխտել. մեր աշխարհականը ազատ է մէկի հետ եւ բեկոյին բարեկամ ննջել, առաւօտուն թշնամի զարթնուլ։ Ինչո՞ւ մեղանից հոգեոր զրուածք պահանջելուս մեր ի-

մաստունը, ինքը մտքով չի երթալ մեր սուրբ Լուսաւորչու, նորա որդւոց ու թոռանց դարը. անտի իջանել ընտելանալ մեծին «Աերսեսի բարուց բնաւորութեանը. անտի սրբոց թագարդմանչաց ու նոցա ժամանակի ազգի հանգամանքին տեղեկանալ և բոլոր այն հանգամանքները բաղդատել ներկայ ազգիս վիճակի հետ. քան թէ առանց տեղեկութեան, առանց իրաւունքի, հոգեւորականներին այսպէս ազգային զրուածքներէ կուզէ արգելուլ. որպէս թէ մեր ազգը առանց հոգեւորի աշխարհքի ազգերին անհաղորդ մէկը լիներ:

Երբ որ աշխարհքիս ազգերը առաւելապէս այս լուսաւոր ժամանակիս՝ իրենց ազգի հնութեամբը, ազգային զործոց պատմութեամբը կ'պարծին, մեր ազգն էլ ուրիշ ամէն ազգային պարծանքներէ զրկուած, նոյն ազգերի մէջ այսօր մի միայն աշխարհքի հին ազգաց կարգում՝ իր հնութեամբը, իր ազգային նախնական պատմութեամբը կ'պարծի, և իւր նախնեաց դիւցազնական զործոց քաջութիւններով ։ այ ազգ կ'ճանաչուի: Արենեանցը այս ազգային միակ պարծանքը — ։ այկազմանց դիւցազնական զործոց պատմութիւնը՝ անհետացեալ ճողըն-նիւն կանուանէ. որով և մեր ազգութիւնը կուրանայ ՚ի ։ այկայ սերելը. հետեւաբար՝ Արենեանցի հայ անունը իր վրա առնելն էլ՝ անհետացեալ մոլորութիւն է. ուրեմն Արենեանցը հայութենէ ելերէն եաքը՝ ի՞նչ անունով բանազէտ պիտի ճանաչուի ։ այոց մէջ: — Ահա իւր անմիտ բանազատութեան հետեւանքը:

Սուրբ Լուսաւորիչը ։ այոց ազգի վերստին դարձին ՚ի քրիստոնէութիւն, հոգեւոր հաց պատրաստեց ժողովրդին. բայց սուրբն Արթանէս և մեծն «Աերսէս ինչու իրենց սր

կոչմանը անվայելուչ՝ մէկ ձեռքով Աւետարան բռնած, միւս ձեռքովը սուր, մէկը Առստանդեայ կայսեր թուղթ կը զրէր ու Տրդատայ որդին թագաւոր դնել կտար, միւսը թէ՛ոդոսի ընդառաջ պատղամաւոր կերթար. և հաշտութիւն մաղթելով, պատանդները կառնուր կ'զառնար: Խմաստունը աշխարհական լինելով Աստուածաշունչ էլ չե կարդացել, ըստ որում աչքերը կապել են հոգեւորականք, որ իմանայ թէ ով էր այն մարզարէն, որ մէկ ձեռքով օրէնք կ'տար Խորայէլին, միւս ձեռքով սուր կ'ամբառնայր ընդդէմ Ամաղէկայ: — Աստուծոյ տնօրէնութիւնը այս է, բայց Արքենեանցի կամքը ոչ:

Ի՞նչ դորձ ունեին սուրբն Սահակ և Մեսրովը, որ իրենց սուրբ կոչմանը անվայելուչ՝ մէկը իր հայրապետական հովուութիւնը թողած, միւսը իր վարդապետութիւնը, Դանիէլեաննշանազրովք տղայք կվարժեցնէին. մէկը աղօթքով չայոց լեզուի գիրը գտնելով, վերջապէս երկուքն 'ի միասին Պարսից և Յունաց բաժնի հայերը հայկական դպրութեան մէջ վարժելով, չայոց զրականութիւնը կծաղկեցնէին ու ամէն տեղ դպրոց կբանային:

Ուրեմն այս ամէն նշանակեալ սուրբ հարք, նոյնպէս և մինչեւ մեր օրը եղողները, բոլոր հայկական իշխանութեան և անիշխանութեան ժամանակներում, որքան որ ազգային դպրութեան, ազգի նիւթական և բարոյական ալիտոյիցը խնամք են տարել թէ գործքով թէ գրուածքով, նոքա ամէնքն էլ մի միոյն հայ ազգի անդամք են, չայոց Եկեղեցւոյ հոգեւորականք չեն, ըստ որում հոգեւոր գրուածք չունին:

Սուրբն Մեսրովը ազգային լուսաւորութեան այնքան տառապակիր դործքերի մէջ ուրիշ հոգեւոր գրուածք յա-

նուանէ չի թողել. Թասրգմանչաց շատերը հոգեոր զրուածք չունին. Եզնիկը՝ Եղծ աղանդոց, Փարպեցին՝ աղզային պատմութիւն, Առիւնը՝ Մեսրովայն, Եղիշէն՝ Արդանանցը թողին մեզ. ‘Դաւիթ’ Արիստոտելի Պերիարմենիասը և Պորփիրի ‘Սերածութիւնը: — Այս հոգեորականներն էլ, ըստ վճռոյ Արբենեանցին, հայ աղզին միայն անդամք են, բայց Հայոց Եկեղեցւոյ անդամք չեն:

Դակ սուրբ ‘Աերսէս Շնորհալին’ որ նշանակեալ հոգեւորականներին հակառակ՝ հայ աղզի կրթութեան համար զրուածք չունի. Նորա աղզային յառաջադիմութեան կամ աղզի վիճակին վրա արած ջանքն ու արդասիքը չեն յիշատակուիր, բաց իւր հոգեոր զրուածքներէն. ուրեմն սա էլ որքան որ Հայոց Եկեղեցւոյն Աթուղիկոս է, Հայոց աղզի անդամ չե:

Հետեւաբար՝ Արբենեանցը որ հայ աղզի լուսաւորութեան, հայ աղզի յառաջադիմութեան համար մինչեւ հիմա քրաինք թափելով բոլոր իւր կենաց մէջ թողել է, ինչպէս որ վերը ասացինք, երեք զիրք, ինքն էլ որքան որ հայ աղզին անդամ է, այսու ամենայնիւ Հայոց Եկեղեցւոյն հարազատ որդի չե:

Տեսնեն ահա ընթերցողք թէ մեր իմաստունը իւր կարծեցեալ սխալը ուղղելու բարձրանալով, քանի նորանոր սխալանաց անդունդն է սուզել. Մարկոս Կուրելիոսի ասածին պէս՝ իր մեծամեծ պակասութիւնների վրա դիտակի մանրացոյց կողմովն է նայել. այլոց մանր պակասութեանց՝ խոշորացոյց կողմովը: — Ազգային գրականութեան պատմութիւնը և ընդհանրապէս աղզը ճղակոտոր պիտի անենք, որ զԱրբենեանցը արդարացնենք իւր սխալանաց մէջ: — Այս էլ անելու մենք աղզին թշնամի չենք:

Խակ եթէ վերոյիշեալ սուրբ հարք ամենն իրենց ժամանակին իրենց հայութեամբը հայ ազգի անդամք էին և հոգեոր կոչմամբ էլ չայոց հոգեորականք, սոքա իրենց դարու մէջ ընտելացած էին երկրի հանգամանքներին, ժողովրդոց հոգեոր և մարմնաւոր ներկայ վիճակին. սոքա իրենց ժողովրդոց կարիքն իմանալով, ոմն Ալաթուղիկոս էր, բայց ազգի իշխանութիւնը մշտնջենաւոր պահելու համար, կուրծքը դէմ դրած, ազգի վրա դաշիք ամէն դիպուածների հետ էր պատերազմում, և իր թիկունքն էր դէմ դնում. ոմն ազգի մտաւոր և բարոյական վիճակը լաւացնելու համար՝ իշխանաց ձեռնտուութեամբ<sup>1)</sup> երկրէ երկիր աշխարհքէ աշխարհք էր թափառում. այլ ոմն ազգի անակնկալ փոփոխութիւնը տեսնելով՝ ի տղիտութենէ՝ ի գիտութիւն, ազգային անցքերն էր պատմազրում. մէկը գպրոց բանալով, աշակերտ կուսուցանէր. միւսը զիտութեանց հետ մրտած հեթանոսական և հերձուածողական մոլորութեանց դէմ կ'պատերազմէր: — Ա երջապէս ամէն ժամանակ հոգեւորականները ազգի բարոյական և նիւթական սլիտոյից վիճակին և ժամանակի հանգամանքին համեմատ շարժեցանու զրեցին թէ հոգեոր զրուածք թէ բանաստեղծական և թէ փիլիսոփայական. միայն թէ իրենք էլ ազգի զանգուածէն լինելով, ազգը ինչպէս՝ ի հաւատ, նոյնպէս և՝ ի գիտութիւն յառաջազրեցին: — Սոցա ժամանակէն կ'տեսնենք որ ոչ երբէք մատենազրութիւնը բաժին բաժին եղած է եկեղեցականի և աշխարհականի մէջ. այլ ընդ հակառակն ազգի մէջ Առամշապուհ չեղած ժամանակն էլ, եկեղեցականը իբրև՝ ի պաշտօնէ սրբոյն Առարովքայ դէպ

<sup>1)</sup> Տես Համբաւաբերի 37, 38, 39 թուերը  
ՀՍԽՀ-CCP  
Ա. Ա. Մաշնիկի  
Ա. Մաշնիկի Անդր

՚ի ազգն ունեցած պարտաւորութեան բեռը շալակել է. և մատենագրութե աշխարհքը տղիտութեան խաւարը պատած ժամանակին էլ եկեղեցականը դարձեալ ՚ի յայրս և ՚ի լերինս պատսպարուած տեղէն, թէ ճաճանչափայլ արե չի ճառագայթել, դարձեալ կասենք որ իր մտաց շնորհաց իւղովը և իր վաստակասէր գրչի պատրուգովը աղօտափայլ լապտեր է կարկառել. և այսպէս ազգային մատենագրութեան անընդհատ պատմութիւնը մշտնջենաւորել է մինչեւ մեր օրը, և իբրև հողի՝ մարմնոյ կենդանութիւնը անմահ է պահել:

Եւ արդարեւ մարդս ստեղծուած է յԱստուծոյ՝ ՚ի հոգւոյ և ՚ի մարմնոյ. մարմինը կ'զործէ հոգւոյն ներզործութեամբ. մինչեւ հիմա հոգին մարմնոյ կենդանութեան վրա՝ դնենք թէ կը հսկէր. մարմինը զտաւ իր հոգեկան զօրութիւնը. այժմ ի՞նչ ամօթ, եթէ մարմինը զործէ հոգւոյն ներզործութեամբ. ինչպէս ամենայն ազգ, նոյնապէս և մեր ազգը ՚ի հոգեւորէ և ՚ի մարմնաւորէ կ'բաղկանայ մի ազգ: Կյա բարոյական հոգին ու մարմինը միմեանց զործակցութեամբ ազգը պահեցին և կ'պահեն: — Կյա ճշմարտութիւնը կարող է ուրանաւ կարենեանցը, թող իր արդեամբքը ցոյց տայ. իննեւտասներորդ դարու ազգաց քաղաքականութիւնը տակաւին այս ճշմարտութիւնը կ'խոստովանի, կարենեանցին մնաց ուրանաւ մեր ազգի գոյութիւնը. կամ արդեօք իր ապարդիւն կենացը մէջ՝ Հայոց ցանկալի Երշալոյսը քառորդ դարու յարատեւութեամբ ի՞նքը կ'ծագէ մեզ Հայաստանի Երեմուտքէն, կամ ազգօգուտ Մասիսը ՚ի Վոսփորէն, և կամ Եւետարեր Մասեաց Եղաւնին. կամ թէ ի՞նքն է արդեօք որ զիշեր ու ցերեկ կեանք և զրիչ մաշելով մեր եկեղեցւոյ հայրապետաց սրբազն

զրուածքներէն մեղ Շռաքաղ կլինի, և վասն բարեաց և օգտի ազգին՝ Համբաւաբեր:

Ապրենեանցը սոցա և ոչ մեկի արդիւնքը շունելէն ետքը, և ոչ իսկ Հայոց զրաւորական աշխարհքի մթնոլորտին մէջ գիսաւոր աստղ երեցած՝ Արեւելքի, Արեւմուտքի, կամ Արփի Արարատեանի, և այլոց նման, իսելքը կը կտրի՝ որ մէկ երկու տղէտ հոգեւորականի նախատինքը ազգի ընդհանուր հոգեւորականութեան երեսին տալու իրաւունքը իրեն էլ տրուի. — Թող զնայ մտածէ իմաստունք. որ այժմ մեր ազգն էլ լոկ բանի և դործոց արդիւնքը ճանաչելով, այժմ գործոցն առաւել միտ զնեն քան բանից. և ըստ այնմ ազգի և հոգեւորականութեան վրա խօսելու իրաւանց աթոռներն էլ ըստ արդիանց կ'շնորհուին թէ և կեղեցականի թէ աշխարհականի, և ոչ թէ ազգի գանձը սուառող և լոկ անուն կրող վարժապետի:

Հարունակենք. Խորենացին վարդապետ էր և Հայոց Եկեղեցւոյն Եպիսկոպոս. բայց նորա ժամանակ ազգի վեճակը և ժամանակին հանգամանքը այնպէս պահանջեցին, որ ծերունի քերթողահայրը իր սուրբ կոչմանը անվայելուչ՝ Պէտոյէց անուանեալ բանաստեղծական զիրքն էլ զրեց. ազգային պատմութեամբը ազգն էլ անմահացրեց:

Սորա հակառակ Գրիգոր Մազիստրոսը աշխարհական էր, բայց առ Խքրահիմ ամիրայն Աստուածաբանական թուղթ զրելով, ոչ եպիսկոպոս եղաւ ոչ աշխարհական. այլ ժամանակի հանգամանքը այնպէս պահանջեց որ իր աշխարհական մեծամեծ ծառայութեանց հետ՝ ազգին զրաւորապէս և հոգեւորապէս ևս ծառայեց:

Գոհութիւն Աստուծոյ, այժմ ոչ հալածանաց ժամանակի մէջ կապրինք և ոչ չքաւորութեան, որ մեկի մէջ

կուրծքներս դէմ գրած՝ հեթանոսական և հերձուածողական մոլորութեանց հետ պատերազմինք. և միւսի մէջ պարկը շալակներս ձգած՝ երկրէ երկիր զիւր մուրալու թափառինք ու աղդ պահենք: — Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի: Ժամանակին մեր երջանիկ նախնիքը պատրաստել են մեր լեզուի զիրը. ճոխացրել են մեր ազգային դպրութիւնը. քրիստոնեայ թագաւորք ևս հիմա կապահովացնեն մեր ազգութիւնը և ազատութիւնը. հոգեւորականն էլ ըստ չափու կարողութեան ժողովրդին հոգեւոր կերակուր էլ կ'պատրաստէ, մտաց բարոյական քաղցր լցուցանելու էլ:

Հայց մեծ երանութիւն էր մեզ, թէ մեր ազգի աշխարհականը այնքան լուսաւոր լինէր 'ի զիտութիւնս, որ ամեն տեղ էլ ինքը ազգը լուսաւորէր դիտութեամբ և արուեստիւ, ծաղկացնէր ազգային դպրութիւնը, ճոխացնէր մատենազրութիւնը (մենք Ասրենեանցի դառն կրից և առելութեան նախանձը չունինք), այն ժամանակը կարծեմոր զրիւը ձեռքը ունեցող հոգեւորականը կ'ամփոփէր զայն մի միայն հոգեւոր զրուածքներ զրելու. այն ժամանակը և մենք մաղթանօք և հոգեկան ուրախութեամբ հանդերձ միօրինակ աչօք կնայինք ինչպէս մեր, նոյնպէս և մեր աշխարհական արենակից եղբարց զրաւոր արդեանց վրա, ինչպէս որ մինչեւ հիմա տպազրական մամուլէն ելածների վրա. զորոնք առ հաւատչեայ կհամարենք ազգային լուսաւորութեան մեր ազգի աշխարհական մասին ձեռքով:

Կ՞նչ վատ զործ կհամարի ուրեմն իմաստուն բանադատը մեր վիպասանութիւնը մեզ. միթէ համեստութիւն պիտի համարէինք մեզ. Անուշաւանը զրելուս՝ 'ի զիտութիւն Ասրենեանցին զայն ևս յիշելու, թէ մեր սուրբ կոչ-

մանը վայելու զրուածքներ էլ հրատարակած ենք և պիտի հրատարակենք. մեր վրա յարձակուելու իրաւունքը ուստի կառնու: „Այս խօսքերը զբելով, չկարծէ մինը, որ բոլոր հոգևորականաց վրա եմ յարձակուում, քաւ լիցի“, այլ միայն մեր վրա. ուստի կառնու այս վստահութիւնը. դուցէ...իր իրաւունքէն. բայց և այնպէս արդարը մարդասպանի բահաղին ծունը չի պիտի կրկնէ. վասն զի իրեն ասած բահաղին ծունը չի կրկնող եօթը հազարից մինն է նա (Եր. Առա. 816):

Խօնչ վատ զործ կ'համարի մեզ մեր վիպասանութիւնը, որ զրուած է ժամանակի հանգամանքին ժողովրդոց վիճակին համեմատ՝ զիւղական մէկ դպրոցի օղտին համար:

Եթէ Անուշաւանայ սատարիչ իշխանին Դիմենա չեն ասիլ, որ քանի մի նմանօրինակ զրեանք ևս տպել տուած ունի յօդուտ աղզին, որ և Անուշաւանէս փոքր տետրակի համար մեզանից մեծերէ մեծագոյն տիտղոսներ առած է, բայց Ապրենեանցը տեսնելու շոայլ կեղծաւորութիւն կանէ. եթէ դպրոց բացողին, եկեղեցի հիմնողին, Հայքենասէր չեն ասիլ. եթէ աղզի աղքատների ու անանկներին ծածուկ նմանք տանողին, աղջուռէր չեն ասիլ. ապա Ապրենեանցի նման հոգևորականի հանդերձով իր մերկութիւնը ծածկող և հոգևորականները մերկացնող մէկ անձնացոյց՝ անունով բայց ոչ զործով՝ բանագետի, արժան է արդեօք այս պատուանունները տալ. որ ցայսօր ժամանակի աղզի ուսման, ժողովրդոց վիճակի բարելաւութէ, և ըստ Քրիստոսի աղքատացելոց գանձանակը մէկ լուսայ անդամ չձգելով (թէ որ չվերցնէր), ուսումն էլ այսպէս նախանձու ատելութեան հոգւով կ'յարգէ. ինչու որ հոգևորականի վրա կտեսնէ որպէս թէ Հայոց Եկեղեցւոյ ընդհանուր

Հոգեստականութիւնն էլ այնպէս տգէտ լինէին, մինչև  
Աստուածաշնչին խօսքը աղջատէին և ժողովրդոց աչքերը  
կապէին:

Մեր բանադատի իր կարծեցեալ դատին մեջ մենք բաց  
՚ի ստութենէ և 'ի սխալանաց ուրիշ բան չի գտնելով, բա-  
նազիտաց էլ ձանձրութիւն կհամարինք զայն դատել տա-  
լու. բայց մեր Անուշաւանայ սատարչի յարդանաց պատ-  
ուանունները որ մեր բանադատի աչքը չի վերցրել, մենք  
՚նրա արժանի յարդանքը մեր ծերունոյն խորնոյ հետ կր-  
տանք. գուցէ՞ նա ևս բազմամեան ծերունին՝ մեր նման այս-  
պէս իւր ժամանակի իմաստուն բանադատէ անիրաւ դատ-  
ուելով, բայց մեզ հետ անաչառ և յետին դատաստան  
ճանաչելով, իւր սրտի մրմունջը այսպէս վեր հանեց: «Ո՞վ  
զմերս յարդեսցէ զուսումն... Ո՞վ ոք 'ի ձէնջ թոշակս յա-  
ղազս մեր. ով ոք վարդապետացն մաղթանս. ով ոք բան  
յօժարեցուցանող կամ յորդորական. ով ոք յերթալն մեր  
բեռնաբարձս. ով ոք 'ի զալս մերում հանգիստ. ով ոք  
տուն կամ օթանոցս մեզ պատրաստեաց. թողից զայլն զի  
և ոչ զլեզուս չարս և զտղիտութիւնս հանդերձ սնուոի փա-  
ռամոլութեամբն և կատաղի լեզուանութեամբ սանձահա-  
րեցիք, այլ նիւթ նոցա անմտութեանն զձեր ուսումնա-  
տեացդ տալով բարս, բորբոքեցէք առաւել քան զհնոցն  
Շաբելոնի» (Ք. Գեր+ ԱՅ):

Այս նախանձու էլ ահա Ապրենեանցը Անուշաւանայ  
լմուն կը կոչէ օտարախորդ լեզուէ նոր բանելոնեան խոտոնա-  
խոնէն. մենք վճռաբար կասենք իր գրուածքներէն հաս-  
տատելու պայմանաւ. որ ինքը ամենեին այլ աշխարհաբառ  
լեզու(բաց 'ի Ապրենեցւոց) խօսելու և զրելու շնորհք չունե-  
նալով, ի՞նչ զաւառական աշխարհաբառ էլ որ իր հայրե-

Նի լեզուի յատկութիւնը չե՞ կրի, կարնեցւոյ կոկորդին չե՞  
քաղցրանալ. — Անուշաւանայ լեզուն Ապարշապատայ  
մաքուր աշխարհաբառն է. Արքենեանցը կ'պնդէ թէ չէ. այս  
վէճը որ բանագիտը պիտի կտրէ. ինքը „տասը տարի յա-  
ռաջ որ գրեթէ միայն բանագիտ էր.“ այսօր տասը տարի  
ետքը դեռևս մաքուր աշխարհաբառ խօսել չգիտէ. ուրեմն  
վէճը մնաց անլուծանելի. ի՞նչ զարմանք որ մենք մեր հայ-  
րենի լեզուին մէջ (Ապարշապատայ աշխարհաբառն) սըն-  
ուած յիսուն տարի էլ արդէն կեանք կ'անցնենք նորա մէջ,  
ու մենք մաքուր խօսել չե՞ կարողանանք, իսկ Արքենեանցը,  
որ քսան տարի է Արաստան փոխազրուել և տակաւին երկ-  
րի աշխարհաբառը խօսել կը կակազի, նա առաւել հաս-  
կանայ Ապարշապատայ աշխարհաբառքան զմեզ, զուցէ  
իր ճանապարհորդութեան պէս, երբոր Աթոռոյ նորա-  
տունկ Անտառի համար կ'ըրէ թէ երկու վերստ զնաց, ու  
ծայրը չե՞ հասաւ, որոյ բոլոր երկարութիւնը դեռ ևս կէս  
վերստ հազիւ կայ: Արքենեանցի ամէն տեսած ու զրածն  
այսպէս է:

## Գ

Երրորդ խօսքն է Արքենեանցի երեք հարցմունքը և պահանջ-  
մունքը մեզանից:

Ա. Թէ մենք սի՞նչ տեղից դիտենք որ սուրբ Լուսաւորիչը կորցրուց  
„մեր ազգի կռապաշտուե դարուց մեհենական պատմութիւնը“,  
զի՞նի որոյ անմիջապէս կ'յարէ. „Ազաթանգեղոսի՝ Լուսաւորչի  
„գործոց ականատես պատմիչի (սքանչանալու աշխարհաբառ)“  
„գրուածքները քննենք, տեսնենք, թէ կայ արդեօք ձեր ասած-  
ների նշմարանքն անդամ“ (Եր. Կռ. 820):

Ուստի Աղաթանգեղոսի 579, 588 և 605. երեսները  
կըննէ ու չե՞ գտնել. վերջապէս ճարը հատած ձեռք կառ-

նու **Օհնորայ** պատմութիւնն էլ որ սուրբ **Լուսաւորչու** ժամանակակից էր, զուցէ մինչև ցայսօր էլ իր նշանակած զրքերը կթղթատէ ու չի զտնել:

**Այս** մէկը որ խնդալու արժանի բան վասն զի այնքան թղթերը դարձնելու տեղ եթէ մի միայն **Վնուշաւանայ** յառաջաբանութիւնը բաց աչքով և անմոայլ խելապատակով կարդար, իսկոյն իր հարցման պատասխանը կառնէր. „մենք ի՞նչ տեղից գիտենք“: — **Ահա**, „Գրագիտաց բերնիցը իրաւացի մեղաղբութիւններ կը լսուին:“

**Ովկէ** մեղաւորը հիմա, ունէ Ապրենեանցը Գրագիտներ կարդացել՝ պատմէններ է հասկացել. չի հասկանալով արած հարցմունքին պատասխանը ի՞նչ է, կարծեմ որ, դառնալ իր սխալ հարցմունքը ուղղել. միթէ կը կարծէր իմաստունը, որ մենք ևս իր նման Գրագիտ զրիլ, պատմէննենք հասկացել. որ մեր գէմը **Վգաթանգեղոս** ու **Օհնորը** վկայ կը կոչէ. և իր սխալ հասկացածովը զմեզ զըսպարտիչ կ'անուանէ մեր սուրբ **Լուսաւորչին**: **Վնենք** այդ երկու բառերը իրարից որոշելու չափ գոնէ լոյս ունինք, որքան որ իր չափով բանագիտ չլինինք:

Բայց որովհետեւ ամէն բանագիտ տակաւին մեր **Վնուշաւանը** չկարդաց<sup>1)</sup> , մեր զըսպարտութիւնն ու Ապրենեանցի ճշմարտութիւնը յայտնի անելու համար, նոյն յօդուածը, ղնենք **Վնուշաւանայ** յառաջաբանութեան մէջ: „Որքան որ հայ ազգի զրականութեան հոգին կ'զարթնի, այնքան էլ զրագիտաց բերնիցը իրաւացի մեղաղբութիւնները կը լսուին նախնեաց քանի քանի երեելիներու միամտութեամբ արած զործքերի վրա...ու որպիսի հարուած է

<sup>1)</sup>) **Տիեզերականութեան առաջնային մօտ:**

ազգային զրականութեան՝ Հայոց ազգի մեհենական պատմութեան կորուստը. և որպիսի լոյս չէր տալ ազգային պատմութեան, թէ որ հիմա լիներ<sup>“</sup>: Ահա այս կորստեան վրա մեր սրտի զգացած ցաւը յայտնել ենք այսպէս. „Ով արուց այս կորուստը, մեր հաւատոյ երկրորդ Հայրը սուրբ Լուսաւորիչն Գրիգոր<sup>“</sup>:

Ահա զրագիտաց զրուածքն էլ մեր ասածին ապացոյց. ա. „Անթիւ ձեռագիր մատեանք հնութեանց Հայոց կորնչին ընդ մեհենաց կոոց<sup>“</sup>, երբոր սուրբ Լուսաւորիչն մեր Հայաստանի կոապաշտական մեհեանները կը կործանէր (Եփատամութեան ուղղահաւատ Եկեղեցւոյն Հայոց յաղեւսակս համառօտեալ՚ի Մէքայէլ Արք Եպիսկոպոսէ Սալանդեան. ’ի Մոսկով. ’ի Տպարանի Շնմարանի Տեար Լազարեանց. 1841 ամի \*):

Բ. „Գրիգոր Լուսաւորիչքրիստոնէութիւնը տարածելու համար ի՞նչ ըրաւ. — Ակսաւ այրել կոապաշտական և մեհենական զրուածքը. կործաննել կոոց մեհեանները . . .“ (Հնախօսութիւն Հայաստանի աշխարհաբառ. երես 216. տպեալ ’ի Անենետիկ յամի 1855):

Ահա մեր զրած խնդրոյ ապացոյցք. թէև կարող էինք շատ վկայութիւններ ևս բերել ’ի զրագիտաց և ’ի պատմաբանից ևս, բայց մեր առասպել զրելու պարապմունքը աւելի է մեզ հարկաւոր քան մի պատմազիտի սխալանքը ուղղելով օրեր անցնել:

Բայց զարմանալին այս է մեզ և ամենայն իրաւաբան ընթերցողաց, որ Ապրենեանցը մեր Անուշաւանայ վրա իւր բարեմիտ կրիտիկան զրելու՝ պատճառը այս ցոյց կտայ, թէ

\* ) Տես և զգրեալն ’ի սոյն միտս ’ի Պատմ. նոյն եկեղ. որ կայ ’ի վերջն Արքաղան Պատմ. տպելոյ ’ի նոյն մայրաքաղաքի յամին 1832. յէջ 80:

մենք մեշնական պատմութեանց կորուսոը (որսկէս թէ ոչ  
մեկը զրած չլինէր) մեր սուրբ Առւսաւորչի վրա դնելով,  
զրպարտել ենք նրան:

Վարդ եթէ ճշմարտապէս այս է եղել իր բանադատու-  
թեան պատճառը, կտեսնի ապաքէն իմաստունը, որ այս  
խնդիրը վերը նշանակած զրագէտների առաջինը որ Հայոց  
եկեղեցւոյն արժանաւոր եպիսկոպոսաց մինն էր, Վնու-  
շաւանէն քսան տարի յառաջ հրատարակեց զոյն. Երկ-  
րորդն էլ չորս տարի յառաջ ազգային դպրոցների հա-  
մար ապագրած հնախօսութեան մէջ. ուստից վեց տա-  
րի յառաջ Տփիւխիսի մէջ միայն բանագէտ էր Արքենեանցը,  
ինչո՞ւ ուրեմն այս իր մերժած փաստի վրա բանադատու-  
թիւն չի դրեց մեկի դէմ քսան տարի յառաջ, զոր եկեղե-  
ցական պատմութեան մէջ հրատարակեց. և միւսի դէմ,  
զոր վեց տարի յառաջ ազգային դպրոցների մէջ ուսուցա-  
նելու համար տպեց:

Վայս զրագէտները մեզանից յառաջ արին այն զրպար-  
տութիւնը մեր սուրբ Առւսաւորչու վրա, զոր ոչ Վա-  
թանգեղոս և ոչ Օքնոք դրեցին. և սակայն ուր էր Արքե-  
նեանցը: «Դնենք թէ քսան տարի յառաջ չկար. բայց տասը  
տարի յառաջ միայն բանագէտ էր Տփիւխիսի մէջ. վասն էր ա-  
պաքէն իր մերժած խնդրոյն դէմ ախոյեան դուրս չեկաւ. —  
յիրաւի որ այն օրից (Վստուածաբանութեան Վագիստրո-  
սի բողոքելու օրից) մինչեւ ցայսօր մեր ասածին պէս՝ պա-  
պանձեցրել էին խեղճին: — Վայս էլ մեծ ապացուցութիւն  
չէ Արքենեանցին մեր Վնուշաւանայ դէմ ատելութիւն  
ունելոյն:

Բայց թող իմանայ Արքենեանցը որ մենք որքան որ  
զրագէտաց զրածը վերը նշանակեցինք, այն մեր զրածին

ապացուցութեան համար միայն է. (Ե հարկէ այն զրադէտները եթէ լինէին Արքենեանցի շափ իմաստուն մարդիկ, մենք էլ չենք ընդունել). այսու ամենայնիւ մենք շամասութեամբ իր նման նոցա զրուածքը յամառութեամբ չենք բռնիլ ու կենալ. երբոր խնդիրը լինի պատմաբանից զրելու կամ չզրելու համար, այն ժամանակը կտեսնի զմեզ և քան զինքը հաւատարիմ մեր սուրբ. Կուսաւորչին որ պաշտելի է մեզ :

Եյլ որովհետեւ ամէն ուշի ուշով ընթերցողի յառաջը հանդիպած ժամանակին այն առասպելները կամ թէ նախնի հայկազնց զործոց պատմութեան հիմունքը, արդարեւ միտքը շյագենալով, թէ նոցա խրթնութեան և թէ նոցա ծածուկ միտքը անդիտելի մնալուն համար, յորոց շատը ծերունի պատմաբանը յերգոց վիպասանաց է առել. (Է Գեշ+. Ճ). իբրև արդարեւ աղգ՝ այս պատմաբանական պակասութեան ցաւը կզգայ. ինչպէս և մենք մեր սրտի զգացած լոկ ցաւը յայտնել ենք: Եթէ Արքենեանցը այս առասպելները կարդացել ու այս պակասութեան ցաւը չերդզացել, ուրեմն մարդկային սրտի զգացմանը հաղորդ չէ նա:

Եթէ լինէին մեհենական պատմութիւնքը, արդարեւ խորենացւոյ յիշած առասպելները լաւապէս կ'բացատրէին, որովհետեւ մեհենական պատմութիւնքը մեր թագաւորաց զործքերը ես կսպարունակէին իւրեանց մէջ, և ոչ թէ Արքենեանցի հասկացած՝ „միայն սուտ աստուածների ծիսից, արարողութեանց տօնական հանդէսների տօնացոյց էին“ (զուցէ Արքենեանցը տասը տարի յառաջ իր զրած օրացոյցները այս տօնացոյցի վրա կ'շինէր), զոր ահա Խորենացւոյ վկայութեամբ հետեւեալ հերքումների մէջը ցոյց կտանք:

Բ. „Խորենացին ասումէ որ մե՞ր աղջի պատմութիւնը գրելոյ ոչ ոք „հոգ չի տարաւ. ուրեմն ի՞նչ էին Լուսաւորչի փշացրած մեհենական պատմութիւնքը“ (Եր. Կռն. 821):

Այլ իմաստունը Խորենացւոյ այս խօսքէն. „Օոր և ոչ մի ոք 'ի նոցանէ (Ծի թագաւորաց մերոց) պէտ յանձին կալաւ մատենազրել“, կարծիք կանէ թէ մեր աղջի պատմութիւնը չէր մատենազրուած թէ հայկազանց և թէ Արշակունեաց ժամանակ. ուստի և այս իր թիւր կարծիքով ծերունի պատմաբանի զրածը կ'վստահանայ փոխել. կամ թէ իր իսկ բառովը ասենք՝ Խորենացւոյ խօսքը աղճատելով, ինքն էլ բոլոր բանազիտաց և պատմազէտ ուսումնականաց աչքերը կապել կուղէ:

Վաղարշակայ թուղթը առ Արշակ, որով կուղարկէ զՄար Արաս Արտինայ՝ այոց պատմութիւնը որոնել Նինուէի դիւանին մէջ, Արենեանցը միայն յառաջ բերելով, ծերունի պատմաբանի զրածը կթողու, զոր նա անմիջապէս թղթէն ետքը կպատմէ այսպէս. „Եւ խուղեալ նորա (Մար Արասայ) զամենայն մատեանսն, զտանէ զմատեան մի հելէն զրով... յայսմ մատենէ Մար Արաս Արտինայ զմերոյ աղջիս միայն հանեալ զպատմութի հաւաստի, բերէ առ Արքայ 'ի Մծրին յոյն և ասորի զրով“ (Ա. Գելք. 9):

Խորենացին որ Մար Արասայ այն պատմազրութիւնը անձամբ կարդացել, և „'ի նոյն մատենէ սկսեալ ասացից“ կզրէ նոյն զլսի մէջ, սա կվկայէ որ „յայսմ մատենէ“ մեր աղջի հաւաստի պատմութիւնը միայն հանեց ու բերեց Մար Արաս:

Իսկ Արենեանցը Խորենացւոյ այս Շշմարիտ վկայութիւնը խարդախելով, այսպէս կ'զրէ. „Կորանից (յայս մա-

անէ) քաղումի Հայոց ազգի և աշխարհքի վերաբերեալ անցքերը“:

Այս մէկ տողի մէջ, “յայսմ մատենէ զմերոյ ազգիս միայն հանեալ պատմութիւն հաւաստի“ երբ որ Արենեանցը հանեալ բառը փոխելով՝ +աղունէ կ'զնէ. աղաքնունեան տեղ՝ անցէրը, և երկու բառ ևս իրանից աշխարհուն Աղաքնունեալ կաւելցնէ, արդեօք ինքը անհաւասարիմ կլենի խորենացւոյն, և այսպէս մեր ազգի հարազատ պատմութիւնը կ'խարդախէ, թէ մենք կլինինք զրագարտիչ մեր սուրբ Կուսաւորչուն՝ մեզանից շատ յառաջ և շատերի զրուածքը կրկնելով։ Այսպիսի անհաւասարիմ զրիչները պատճառ եղան, որ նախնեաց ձեռագիր մատեանները իրենց բնագրի հարազատութիւնը չունին այժմ։

Խորենացւոյ պատմութենէն Հայոց ազգի պատմութիւնը կ'երկրորդեն մեզ Յովհան. Աթուղիկոս պատմաբան և հ. Վիք. Չամչեան, թող զբազումն, և կէտ անզամ չեն վըստահանալ փոխելու կամ իրանցից յաւելցնելու։ Արենեանցի պէս մարդը միայն՝ հոգեւորականաց միսր ծամելու պատճառ դանելու համար՝ ահա այս ճամբան ընտրել է իրեն, պատմութեանց միտքը աղաւաղել. եղած բառը փոխել, չեղածը յաւելցնել. ինքը զինքը կենդանի իմաստութիւն քարոզել, և անզատապարտ մնալ։

Խմաստունը կարծել է թէ ինչպէս որ Խորենացին Մար Աբասեան, յունական և մեհենական պատմութիւններէ քաղելով, Հայոց ազգի պատմութիւնը շինեց, այսպէս էլ Մար Աբաս Ախնօւէի զրատան բոլոր մատեաններէն քաղեց, ու Հայոց ազգի պատմութիւնը շինեց, բայց այսպէս չէ, Խորենացւոյ մէջ ինքն ևս կարգացել է. „Եւ խուզեալ նորա դամենայն մստեանսն, զտանէ մատեան մի հելքն զը-

բովական սորա վերնագիրն անգամ զանց չի առնել Խորենացին յիշելու. յորոյ վերայ էր, ասէ, վերնագիր այսպիսի.— „Այս մատեան հրամանաւ Աղքասանդրի ՚ի քաղղէացւոց բարբառոյ փոխեալ ՚ի յոյն՝ որ ունի զբուն հնոց և զնախնեացն բանս“, յայսմ մատենէ կվկայէ, Ամր Արաս Կատինայ կմերոյ ազգիս միայն հանեալ զպատմութի հաւաստի „Ո՞ր է այս բանի մէջ +առնել ուր է և աշխարհու վերաբերեալ անց +երը. զորոնք մեր իմաստունը մին կփոխէ և երկուքը կյաւելցնէ: Եթէ +առնել և հանել բառերը իրարից զանազանել չի կարող, նոր քերականութիւն սորվողներին յանձնէ, ինքը մոռացել է զայն:

Հիմա իմաստունի այս սխալն էլ ուղղենք որ առանց տեղեկութիւն առնելու Խորենացիէն՝ զրել է. „Խորենացին ասումէ որ մեր ազգի պատմութիւնը զրելոյ ոչ ոք հոդ չտարաւ. ուրեմն ի՞նչ էին Լուսաւորչի փչացրած մեհենական պատմութիւնքը, չեղած բանը փչացնել կարելի՞ է արգեօք“:

Այս հարցման միջի ժամանակազրական սխալը թողտալով, նախ ասենք. եթէ Կարենեանցը արդարեւ պատմաբանական քանքար ունենար, իբրև բանագէտ պիտի հասկանար, որ մեր հայկազունքը Ասորեստանի հետ յարաբերութիւն ունելով առաւելապէս Արամայ օրէն, անշուշտ նոցա զործակալներն էլ որ կլինէին ՚ի Հայաստան, կզրէին նոցա զործոց պատմութիւնը. թող զայս, և երզք վիպասանաց Հայաստանի, ինչպէս շատերը կը կարծեն, արդէն ազգային պատմութեան տեղ կը բռնէին. որպէս ահա վէպք հնոյն Հայաստանին զրող արդոյ հեղինակը կը կարծէ ՚ի բանից Խորենացւոյն որ „Երգն վիպասանաց թերես ամբողջ և ընդարձակ բանաստեղծութիւն էր, յորում ՚ի հը-

նոցն մերոց աւանդեալ լիներ պատմութիւն թագաւորաց հայոց“։ և Երգոց վիպասանաց համար Խորենացւոյ վկայութիւնները յառաջ բերելէն ետքը, կհետեւացնէ։ „Ապա ուրեմն բաց ’ի վկայութենէ քաղցիական մատենին, ուստի հանեալ էր Սար Արաս զնախկին պատմութիւն աղջիս, և որոշակի այս յիշատակութիւն մատենագրին մերոյ զլինեթիւն աղջային պատմական երգոց ակն յանդիման ցուցանէ“ (Աէպք հնոյն հայաստանի (Եջ. 15. 16):

Բայց Ապաղարշակ որ կ'զրէ։ „զի ոչ կարդ ինչ լեալ աստ յայտնի“ ուստի կառնու և Խորենացին „ոչ ոք ’ի նոցանէ պէտյանձին կալաւ մատենագրել“ ոչ թէ հայկաղանց պատմութիր զրած չէր լինել ժամանակին։ այլ թէ իր ժամանակին՝ հայկաղանց պատմութիր ’ի հայաստան չկար, ինչպէս և „ոչ մեհենից պաշտամունք“։ Եւ արդարեւ չէր լինիլ. վասն զի Սակեղոնացւոյ պէս պատմուեց հետամուտ թագաւորը որ կը հրամայէ բոլոր քաղցիարէն զրեանքը յոյն զրով գրել և Կինուէի արքունի դիւանին մէջ պահել, հայաստանի մէջ էլ, որումտիրեց պատերազմով, ինչու կթողար պատմական մատեան մնալու։ բայց Երգք վիպասանաց անշուշտ կային զրեթէ հայկայ և Արամայ ժամանակին։ ինչպէս մեր քերթողահայրն էլ Շամիրամայ վախճանի պատմութիւնը յԵրգոց վիպասանաց կառնու և կհաղորդէ մեզ։ Ակայ այսմ դարձեալ արգոյ վիպասանն հնոյն հայաստանի։ „Աերոյիշեալ պատմութիւնն (Շամիրամայ) թէ քերթողահայրն յառաջ բերեալ ասէ ’ի գիրս Սար Արասայ ’ի քաղցիական մատենից, սակայն ըստ մերումն կարծեաց չեն անխառն ’ի հայ զըռւցաց և աւանդութեանց։ Ա՞ի զի մատենագիրն մեր ինքնին վկայէ այսմ հատուածովքս քաղելովք յերգոց վիպասանաց։ Եւ երկրորդ՝ զի որպէս Սար

Արաս խոստովան լինի, յիշեալն 'ի նմանէ քաղղեական մատեան պարունակեր յինքեան նա և զերզս զուսանականին աշխարհին Հայոց“ (Խոր. առ. Գիր. ժի): “Դարձեալ նա, „Եթէ արդարեւ անիմաստասէրք էին հարքն մեր՝ ըստ ասից Խորենացւոյ, որոց և չեղեւ բնաւ փոյթ զվիշատակութիւն անցելոց զրով աւանդել, ուստի՝ ապա առեալ հեղինակ յիշեալ քաղղեացի մատենին և զմերոցն պատմութիւն շարէ 'ի կարգս բանից հնոց և նախնեաց.— յայտէ եթէ յերզոց վիպասանաց : Այդ ամենայն յերզոց վիպասանաց քաղեալ երեխ և մուծեալ 'ի քաղղեացի մատեանն, ուստի հանեալէ Մար Արաս զպատմութիւն Հայոց“ (Եթ. 80, 77, 12, 13): Եթէ Ասրենեանցը իրեւ բանազէտ այս բաներին զիտութիւն չունի, ի՞նչպարձանք ուրեմն իր բանադատութիւն զրելը.— բայց եթէ Առունկէն վճարումն առնելու:

Ահա „Ոչ ոք 'ի նոցանէ պէտ յանձին կալաւ մատենազրելը“ պարզուից, զոր Խորենացին հայկազանց թագաւորաց համար կ'զրէ, ինչպէս և „զանիմաստասէր բարս առաջնոցն մերոց նախնեաց „կ'բամբասէ, Ասրենեանցը“ հայկազանց ժամանակէն զրեթէ Արշակունեաց ժամանակն անցնելով, որպէս թէ Լուսաւորչի ժամանակի մարդոց համար ասած լինէր Խորենացին թէ“ ոչ ոք 'ի նոցանէ պէտ յանձին կալաւ մատենազրելն, մեհենական պատմութեանց լինելը ուրանալէն ետքը, կը հարցնէ ել „ուրեմն ի՞նչ էին Լուսաւորչու փչացրած մեհենական պատմութիւնքը“.— Ահա փչացրածն ել:

Վաղարշակայ թէ որ „կամ եղեւ զիտել թէ ոյք և որպիսի արք տիրեալ են 'ի վերայ աշխարհիս Հայոց մինչեցնա (առ. Գիր. շ): և հոդ տարաւ Մար Արասայ ձեռքով

Հայոց ազգի պատմութիւնը՝ Աինուէի զրատանէն հանել տալու և յարքունիս զզուշութեամբ պահելու, հարկունա իւր ժամանակի ազգային պատմութիւն էլ զրել կտար. բաւականէ որ Խորենացին իւր պատմազրութիւն կամբողջացնէ Այս Արաւէն եռքը եղող պատմազիրներէն. զորոնք ինքը կարգաւ կ'յիշէ մինչև Ագաթանգեղոս. ուր որ ընթերցողք պարզ աչքով կ'տեսնեն այն պատմազիրները, որոց

Աէկը իր զրած պատմութիւնը կառնու Եղեսիոյ զիւանէն, որ Աճրինէն այն տեղ փոխադրուած էր, „որ յազգս թագաւորացն մերոց պատմէր“ (կզրէ Խորենացին), և Աինոպայ Պոնտոսի մէշենական պատմութիւնէն: — Այս մէշենական պատմութեան համար է որ կզրէ նոյնպէս Խորենացին. „Ա՞ն ոք անհաւատացի (բաց 'ի Ապրենեանցէն), քանիզի մեղէն իսկ ականատես եղաք այն զիւանին. և վկայ քեզ 'ի մօտոյ երաշխաւորեսցէ Եկեղեցիաստէ զիրք Եւսեբի կեսարացւոյ, զորս ետ թարգմանել երանելի վարդապետն Աշշոց 'ի հայ լեզու: Խնդիր արասցես 'ի Գևշարքունի 'ի զաւառին Աիւնեաց, և զացես յառաջին հաղներգութեանն յերեքտասաներորդ թուին. զի վկայէ յԵղիսիոյ զիւանին լինել ամենայն զործոց առաջին թագաւորացն մերոց մինչև ցԱրգար, և զկնի Արգարու մինչև Երուանդ“ (Է. Գէլֆ. Ճ):

Երկրորդն Ողիւմալ քուրմ Հանւոյ կամ Անւոյ զրող մէշենական պատմութեանց. ուստի Խորենացին կտոնուն Արտաշեսի և Երուանդայ երկրորդի և Երուազայ դործքերը և այլոց. և կզրէ սորա համար. „Եւ զայս մեզ ստուգապէս պատմէ Ողիւմալ քուրմ Հանւոյ, զրող մէշենական պատմութեանց, և զայլ բազում դործս զորս տաել կայ մեզ առաջին“ (Է. Գէլֆ. Էլ):

Երրորդն է Բարդածան կամ Բարդեզան Եղիսացի,  
Հայաստանի ամուրն Անոյ մեհենական պատմութենէն  
Հայոց թագաւորաց գործքերը պատմազրողը. ուստի կառ-  
նու Խորենացին Արտաւաղդայ թագաւորութենէն մինչև  
Վաղարշակայ մահը. և կվկայէ թէ, „յայսմ պատմութենէ  
առեալ մեր երկրորդեցաք քեզ ’ի թագաւորութենէն Ար-  
տաւաղդայ մինչև յարձանն Խոսրովու“ (Է. Գեր+ ՀՂ):  
Այս համար ես այսպէս կզրէ. „Օրուցէ մեզ Բարդա-  
ծան որ յԵղիսիայ. քանզինա յաւուրս Անտոնինոսի վերջ-  
նոյ երեեցաւ պատմազրող... վասն զի եկն նա այսր (՚ի  
Հայս) ... եմուտնա յամուրն Անի, և ընթեղցեալ զմեհե-  
նական պատմութիւնն, յորում և զզործս թագաւորացն,  
յաւելով և որ ինչ առ իւրեաւն... յորում պատմէ ’ի  
մեհենիցն պաշտամանց, վերջին Տիգրանայ արքայի Հայոց  
պատուեալ զզերեզմանն եղբօրն իւրոյ Մաժանայ քրմապե-  
տի ’ի Բազնացն աւանի“ (Է. Գեր+ ՀՂ):

Ահա այսպէս մեր երջանիկ պատմաբանը Վաղարշակէն  
ետքը մինչև Լուսաւորչի ժամանակ յանուանէ նշանակե-  
լով մեհենական պատմութիւն զրողները, մանաւանդ մե-  
հենական պատմութիւնքը Հայաստանի մեհենից մէջ, ցոյց  
կտայ որ Արշակունի թագաւորաց գործքերն էլ ըստ մեծի  
մասին ինքը այն մատեաններէն առել է. ցոյց կտայ նոյն-  
պէս թէ այն ամէն մեհենական պատմութիւնքն էլ մեհե-  
նից մէջ կ'պահուէին, մինչև անզամ Եւսեբի ժամանակա-  
դիրն էլ վկայ կը կոչէ: Խոկ Արքենեանցը իր ասածի մէջ  
ահազին ժամանակազրական սխալն անզամ չի տեսնելով,  
որպէս թէ Վաղարշակ և Լուսաւորիչ ժամանակակից մար-  
դիկ լինէին. միանդամայն Խորենացւոյ հարազատ պատ-  
մազրութիւնը, այն պատմազրութիւնը որ ըստ իւր զրա-

ծին՝ „օտար ազգաց անզամ պատկառելի եղած է“ բոլորովին ուրանալու չափ ակն յայտնի առ ոտն հարկանելով, և այս ամէն իր սխալանացը պատասխանատու չլինելու պայմանաւ, ազգային պատմագրութեան էլ հակառակ կվստահանայ հարցնելու „ուրեմն ի՞նչ էին Լուսաւորչու փրչացրած մեհենական պատմութիւնքը“:

Ահա փչացրածը. — Հանւոյ Աղիւմալ քրմի մեհենական պատմութիւնը, յորում Արտաշեսի, Երուանդայ, և նոցաժամանակակից պատմութիւնքը: — Ամուրն Անւոյ մեհենական պատմութիւնը, յորում թագաւորաց գործքերը, և 'ի թագաւորութենէն Արտաւազդայ մինչև յարձանն Խոսրովու. և այլ և այլ մեհենական պատմութիւնք, որոնք գուցէ անծանօթ մնացած էին թերեւ: — Այսպիսի եղած մեհենական պատմութիւնները չէր փչացրածը արդիօք:

Ահա այսպէս մեր իմաստուն պատմագետը որ մեր Անուշաւանը դատելու բանագիտաց ատեանը կներկայացնէր, այժմ ինքը ո՞ո ատենի մէջ կուզէ որ իր ժամանագրական և պատմական սխալները դատապարտուին. — Հոգեորականաց զրուածքը իր նման աշխարհականի դատաստանի տակ չէր ընկած՝ ինքը ձղէց... իր զրուածքը հոգեորականի դատաստանի տակ ընկած քուրմերի յօրինած իրանց սուտ աստուածների ծիսից, արարողութեանց տօնական հանդեսների Տօնացոյց“ (Եր. „Կռն. 821):

Վարենականցի այս երրորդ հարցմանց սխալն էլ տեսնեն ընթերցողք և հաւասարի առնեն Խորենացւոյ վերը կարգաւ

Դ. „Դիցուք թէ սուրբ Լուսաւորիչը մեհեանները կործանելով, նուցա մէջի զրեանքը ևս փչացրուց. բայց ի՞նչ էին այն զրեանքը, աթէ ոչ քուրմերի յօրինած իրանց սուտ աստուածների ծիսից, արարողութեանց տօնական հանդեսների Տօնացոյց“ (Եր. „Կռն. 821):

զրուած պայծառ վկայութիւններէն՝ թէ ի՞նչ էին այն զրեանքը. բայց կարծեմ՝ Աւրացողին՝ քանի մի անդամ ճշմարտութիւնը կրկնելը հազիւ ազգուութիւն կանէ:

Ի՞նչ էին զրեանքը: — Եհա ցոյց առւինք, Հայոց թագաւորաց զործքերը, յորոց խորենացին Հայոց ազգի պատմութիւնը կ'յօրինէ, որոց մեջն էին

ա. Արշակունեաց առաջին Արտաշեսի թագաւորութենէն, (ուր որ կ'սպառին բանք Վար Արտասայ) մինչև Արդարու թագաւորելը, ինչպէս կ'ակնարկէ խորենացին, բոլոր թագաւորաց զործքերը՝ Ածբինէն յԵղեսիա փոխադրուած մատենից մեջ. (Արդար թագաւորի ձեռքով, կոչեցեալ մատեանք մեհենից վարժարանին) (Է. Գեր. էլ): Եւ Սինոպայ Պոնտոսի մեհենական պատմութեան մեջ. (զոր Յոյնք Եղեսիոյ տիրելովը բերին անդ) (Է. Գեր. լը). յորոց առնլով Ափրիկանոս ժամանակադիր, սորա հինգերորդ զրքէն կ'երկրորդէ մեզ խորենացին. որի համար և կ'զրէ. „Վի ոք անհաւատասցի, քանզի մեզէն իսկ ականատես եղաք... ինչպէս վերը զրեցինք:

բ. Արդարու զործքերը մինչև Սանատրկոյ մահը՝ Պերութնայ պատմազրի մեջ. „Պերութնայ որդի Ափշադարայ դպրի զրեաց զամենայն զործս որ ինչ յաւուրս Արդարու և Սանատրկոյ, և եղ՚ի դիւանին Եղեսիոյ“ (Է. Գեր. լը):

գ. Երկրորդն Երուանդայ և Արտաշեսի երկրորդի, լնդ որս և Երուազայ քրմազետի զործքերը և վերջնոյ մահը՝ Անոյ Ողիւմոլ քուրմի մեհենական պատմութեան մեջ՝ մինչև նոյն Արտաշեսի մահը, որի վկայութիւնը վերը դւրինք նոյնպէս: Եւ

դ. Արտաւազկայ, Տիրանայ և այլոց և վերջնոյն Տիրանայ զործքերը՝ մինչև մեջն խոսլովու թագաւորելը՝

Բարդածան Եղեսացւոյ Պատմագրութեան մէջ. որ ինչ-պէս վերը պրինք, յիշեալ թագաւորաց գործքերը հանել եր Անւոյ մեհենական պատմութենէն. այսովէս և մեհենից պաշտամունքն էլ կերեխն դարձեալ ազգային հետաքրքրական պատմութիւն, և ոչ թէ „սուտ աստուածների ծիսից, արարողութեանց տռնական հանդէսների տօնացոյց“.<sup>1</sup> „Ճորում, Անւոյ մեհենական պատմութեան մէջ, կը զրէ Խորենացին, պատմէ 'ի մեհենիցն պաշտամանց, վերջին Տիգրանայ արքայի Հայոց պատուեալ զգերեզման եղբօրն իւրոյ Ասժանայ քրմապետի 'ի Բագնացն աւանի՝ որ 'ի Բագրեանդ գաւառի, բազին 'ի վերայ գերեզմանին շենսեալ՝ զի 'ի զոհիցն ամենայն անցաւորք վայելեսցեն և ընդունիցին հիւրք երեկօթիւք, Ճորում և զինի Աշղարշոն աշխարհախումբ կարգեաց 'ի սկզբան ամինորոյ 'ի մուտքն նաւասարդի“:

Ահա Արքենեանցի հասկացած առնական հանդէսներէ առնացոյց ասացեալ մեհենական պատմութիւնքը տեսանք, որ նոյն իսկ մեր ազգային պատմութիւնը կապրունակեն. նոյն իսկ մեր ազգային հին ու կռապաշտական աւանդութեանց սկզբունքը կ'ամփոփեն. որպիսի Աշղարշայ նաւասարդի ամսամտումնոր տարւոյ աշխարհախումբ տօն կարգելը: Աշսն զի եթէ մեհենական պատմութիւնքը ազգային պատմութեան յոյս կտային մեր ասածին պէս, մեհենական պաշտամանց պատմութիւնքն էլ եթէ մնային, մեր ազգային բանաստեղծութեանը մեծապէս կնալաստէին, ինչ-պէս այսօր Յունացը. ուր թէ և մեր ազգի կռապաշտական դարուց ազգային քաղաքական և կրօնական հանդէսների վրա բաւական ծանօթութիւն կունենայինք. և մեր դրականութիւնը այն աստիճանի արժէք կունենար այսօր

լուսաւորեալ Եւրոպայի յառաջը, որոյ մեծութիւնը դեռ  
այսուհետեւ պիտի ճանաչէ Արքենեանցը գուցէ իր կեան-  
քէն եաւ: — Ահա որպիսի ցաւ չէ ազգային գրականու-  
թեան այս պակասութիւնը. զոր Արքենեանցը միայն չի  
զգալ, որովհետեւ մարդկոյին սրտի այս զգացմանը հաղորդ  
չէ նա:

Այսքան ապացուցութենէն ետքը՝ մեր ազգային արդի  
մատենագիրներին ևս հարցնենք, թէ նոքա ի՞նչ կ'հասկա-  
նան մեշենական պատմութիւնքը, արդեօք տօնական հան-  
դէսների տօնացոյց կը հասկանան՝ Արքենեանցի նման, ե-  
թէ ազգային պատմութիւն կճանաչեն զայն՝ մեր Խորե-  
նացւոյ հետ: — Ահաւասիկ Հեղինակն հնախօսութեան  
հայաստանի.

„Մեշենական կոչեցաւ, ասէ, առ. Խորենացւոյն միւս  
զրատունն, ոչ զի՞ ՚ի նմա պահեալ լինէին մատեսնք մեշե-  
նական պատմութեանց, կամ իւրեանց սնոտի պաշտամանց  
դից... այլ սակս ՚ի մեշեանս պահեալ լինելոյ զրեանց՝ մա-  
նաւանդ յիշատակարանաց և պատմութեանց. մի՛ զի այն  
զրեանք իբր սրբազնն իմն համարեալք, արժանի դատէին  
՚ի մեշեանս ֆնալոյ. և երկրորդ՝ սակս ապահովութեան. զի  
քուրմք նոցա որպէս պահէին զայլանօթս և զգանձս մեշե-  
նին, սոյնպէս և զզրեանս՝ նոցա յանձնէին պահել որպէս  
զպատուական անօթս... մանաւանդ թէ նոյն իսկ քահա-  
նայից կամ քրմաց հեթանոսաց թուի լինել գործ՝ զանցս  
ժամանակի իւրեանց և զթագաւորացն ՚ի զիր արձանացու-  
ցանել. զորոյ զյիշատակ ինչ զանանմք հարեանցի իմն նը-  
շանակեալ առ. Խորենացւոյն, որ վասն գործոց Բն Ար-  
տաշիսի արքայի ՚ի վկայութիւն կոչէ զպատմազրութիւնն  
արարեալ Ողիւմակ քրմին. թէպէտեւ զգիրն կոչէ Հենա-

իսն պատճութեան... Եթէ մեհենական պատմութիւնն լինէր պատմութիւն դից իւրեանց և մեհենից և եթ, ոչ զրեալ լինէին 'ի նմա և գործք Արտաշեսի թագաւորին մերոյ։ Օսյս առաւել ևս յայտ առնէ նոյն մատենագիր (Է. Գեղ+ Էլ), թէ 'ի մեհենական պատմութեան երկոքին ևս պատմեալ լինէին, այսինքն թէ վասն մեհենական պաշտամանց և թէ վասն գործոց թագաւորաց մերոց. զի 'ի զրելն վասն Բարդածանայ՝ ասէ, „Եմուտ յամուրն յԱնի, և ընթերցեալ զմեհենական պատմութիւնն, յորում և զգործս թագաւորացն“ (Համբակ. Հայտ. հապ. Գ. Ել. 94. 95)։

Այս տեղ ևս մեր զարմանքը յայտնենք. Կարենեանցը որ մեհենական պատմութիւնքը կ'իմանայ „Քուրմերի յօրինած իրենց սուտ աստուածների ծիսից, արարողութեց տօնական հանդէսների Տօնացոյց“ (Ե հարկէ Խորենացւոյ Ճշմարտութիւնը ուրացողին՝ ի՞նչ ներգործութիւն կանէ արդի մատենագրաց Ճշմարտութիւնը). Հնախօսութենէղինակը Խորենացիէն առնելով, պարզ կ'ճանաչէ զայն՝ մեր թագաւորաց գործոց պատմութիւնը միանգամայն. վասն որոյ և կզրէ. „Եթէ մեհենական պատմութիւնն լինէր պատմութիւն դից իւրեանց և մեհենից և եթ, ոչ զրեալ լինէին 'ի նմա գործք Արտաշեսի թագաւորին մերոյ“։

Պատճառը ի՞նչ է ուրեմն որ Կարենեանցը մինչև ցայսօր իր պաշտած կարծեացը դէմ զրողին վրա կրիտիկայ չ' զրեց. — իր ստութիւնը և սխալանքը. կամ թէ տասը տարիէն յառաջ կրիտիկայ զրելու շնորհք չունէր։

Ի՞նչ և իցէ, մեր պարտքն է՝ մեր բանագատի այսքան ստութիւնները հերքելէն ու սխալանքները մի առ մի նշանակելէն ետքը, մեր Անուշաւանայ մնացեալ՝ երեսով նշանակած՝ յօդուածների հերքումն ել յետ այսորիկ առան-

22  
42


ձին հատուածով տող առ տող զրել բայց նոյն առանձին  
ատուածը զրելու համար էլ նախընթացաբար զայս ա-  
սելով կնքենք մեր խօսքը:

Ապրենեանցը խորենացւոյ պատմազրութեան վրա որ  
այսքան սխալ տեղեկութիւն ունի, որ իր սիրած զիրքն է  
և իր կեանքին զրեթէ շատ յառաջ տպուած, նա մեր  
Վիպասանութենէն ի՞նչ սխալ պիտի զտած լինի, զորն  
որ չի սիրել, ուստի և չէ կարդացել. վասն զի նա Վիպա-  
սանութիւն կարդալու սէր չունի. (Թէ 814 Երես. Առան.):  
Եթէ Ապրենեանցի սիրած ու կարդացած զրքի սխալները  
այսչափ. ապա չսիրած ու չի կարդացածի սխալները որ-  
չափ ևս առաւել. որչափ և մեզ տօրապարտ աշխատու-  
թեան առիթ, մանաւանդ թէ կորուստ ժամանակի այլ կա-  
րեոր աշխատութեան:

՚՚ 21 Յունուարի

1863 "H."

՚Ե Ա. Էջմիածին:



Дозволено Цензурою 16-го Апрѣля 1863-го года въ С.-Петербургѣ.

Печатано въ Москвѣ въ Университетской Типографіи (Каткова и К°).

21282

12013

